Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 1043 - Ա որոշման

«ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲԱՇԽՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է օգնություն ցույց տալ Հայաստանի տարածաշրջանների բնակավայրերում բնակվող խոցելի խմբերին՝ հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքներին, կրթական հաստատություններին բարեգործական օգնության (ապրանքների) բաշխման միջոցով: Անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև ծրագրում չընդգրկված այլ համայնքների կարիքավոր ընտանիքներին, երեխաներին, կրթական ու առողջապահական հաստատություններին, կազմակերպության հետ համագործակցող հասարակական կազմակերպություններին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ-ի (34834 Վեյերհաուսեր վեյ 5, ֆեդերալ վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ), Կանադայի (1 Վորլդ դրիվե, Միսսիսագվա, Օնտարիո) և Ավստրալիայի (1 Վիժն դրայվ, Բարվուդ իստ, Ավստրալիա 3151) աջակցող գրասենյակների կողմից:
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (քաղ. Երեւան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևանում՝ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան. Ալավերդու տարածաշրջան՝ Ալավերդի, Արևածագ, Մղարթ, Աքորի, Կաճաճկուտ, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Հաղպատ, Քարինջ, Ջիլիզա, Ախթալա բնակավայրերում.

		Ապարանի տարածաշրջան՝ Ապարան, Արագած, Ձորագլուխ, Հարթավան, Լուսագյուղ, Քուչակ, Շենավան, Շողակն, Նորաշեն, Վարդենիս, Եղիպատրուշ, Երնջատափ. Գավառի տարածաշրջան՝ Գավառ, Լճափ, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք, Ծաղկաշեն, Բերդկունք, Ծովազարդ, Գանձակ, Սարուխան. Գյումրի քաղաքի Անի, Մուշ, Շերամ և <Ավստրիական գյուղ> թաղամասերը, ինչպես նաև Մարմաշեն և Հովունի գյուղերում. Կապանի տարածաշրջան՝ Կապան, Աշոտավան, Հալիձոր, Ագարակ, Անտառաշատ, Աղվանի, Արծվանիկ, Գեղանուշ, Գեղի, Դավիթ-Բեկ, Եղեգ, Ծավ/Շիշկերտ, Ներքին Խոտանան, Շիկահող, Սրաշեն, Սյունիք, Տանձավեր, Օխտար, Եղվարդ, ինչպես Անդոկ /Արամ Մանուկյան/ և Մուշեղ Հարությունյան համատիրություններում. Սիսիանի և Գորիսի Տարածաշրջան՝ Գորիս, Բալաք, Դարբաս, Շամբ, Գորայք, Անգեղակոթ, Իշխանասար, Աղիտու, Սալվարդ, Սառնակունք, Լոր, Լծեն, Շաղատ, Շաքի, Գետաթաղ, Աշոտավան, Տոլորս, Բոնակոթ, Քարահունջ, Հալիձոր, Հարժիս, Խոտ, Շինուհայր. Թալինի տարածաշրջան՝ Թալին, Ագարակ, Արեգ, Ակունք, Աշնակ, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Արտենի, Նոր Արթիկ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Դավթաշեն, Կաքավաձոր, Կաթնաղբյուր, Իրինդ, Եղնիկ, Դաշտադեմ, Հացաշեն, Ցամաքասար, Ձարինջա, Սուսեր, Մաստարա, Կարմրաշեն, Ոսկեթաս, Ջովասար, Գառնահովիտ. Իջևանի տարածաշրջան՝ Իջևան, Գետահովիտ, Խաշթառակ, Լուսաձոր, Դիտավան, Ազատամուտ, Այգեհովիտ, Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ, Բերդ, Պառավաքար, Արծվաբերդ, Տավուշ, Ն.Կ.Աղբյուր, Նավուր, Նորաշեն: Վարդենիսի տարածաշրջան՝ Վարդենիս, Ավազան, Գեղամասար, Արեգունի, Դարանակ, Նորաբակ, Շատվան, Ձաղացաձոր, Գեղամաբակ, Շատջրեք, Այրք, Ազատ, Կութ, Սոթք, Տրետուք, Կուտական, Կախակն, Արփունք, Փամբակ, Ծափաթաղ, Ձիլ, Վաննևան, Տորֆավան, Արտանիշ, Ակունք, Կարճաղբյուր, Լճավան, Լուսակունք, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Նորակերտ և Ծովակ. Ճամբարակի տարածաշրջան՝ Ճամբարակ, Աղբերք, Շորժա, Դրախտիկ, Մարտունի, Ծովագյուղ. Ամասիայի տարածաշրջան՝ Ամասիա, Արեգնադեմ, Գտաշեն, Գյուլիբուլաղ, Ողջի, Մեղրաշատ, Ձրաձոր, Հողմիկ, Բանդիվան, Գառնառիճ, Բերդաշեն, Աշոցք, Բավրա, Սիզավետ, Ղազանչի, Մեծ

		Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Կարմրավան, Մուսայելյան, Վարդաղբյուր, Սալուտ, Ցողամարգ, Թորոսգյուղ, Լեռնագյուղ, Գոգհովիտ, Արփենի, Ջույգաղբյուր, Ախուրյան, Հայկավան, Քեթի, Հացիկ, Կարմրաքար. Նոյեմբերյանի տարածաշրջան՝ Նոյեմբերյան, Այրում, Կողբ, Բերդավան, Հաղթանակ, Դովեղ, Արճիս, Լճկաձոր, Պտղավան, Դեղձավան, Բագրատաշեն, Դեբեդավան, Ջուջեվան, Ոսկեպար, Բարեկամավան, Ոսկևան, Բաղանիս, Կոթի, Ջորական: Այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք իրականացնում են անապահով և խոցելի երեխաների և նրանց ընտանիքների պաշտպանության և զարգացման ծրագրեր: Հայ Առաքելական Եկեղեցու հետ համատեղ ծրագրերի իրականացման դեպքում ծրագրերի մասնակիցներին նվիրատվության հատկացում: Բնագավառը՝ սոցիալական.
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է շուրջ 4,331,600,000 ՀՀ դրամ, որը բաշխվում է հետևյալ մոտավոր արժեքներով՝ ՎՎ ԱՄՆ – 2,856,000,000 ՀՀ դրամ, ՎՎ Կանադա – 952,000,000 ՀՀ դրամ, ՎՎ Ավստրալիա – 476,000,000 ՀՀ դրամ, տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում կազմում են 47,600,000 ՀՀ դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Ստացված ապրանքները հիմնականում բաշխվելու են տարածաշրջաններում ընդգրկված համայնքների հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին և սոցիալական ծանր պայմաններում գտնվող այլ ընտանիքներին, Արցախի Հանրապետությունից տեղահանված բնակչությանը, կրթական հաստատություններին. Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 325,000 մարդ, այդ թվում շուրջ 40,000 երեխա: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տարածքային զարգացման ծրագիրը տարածաշրջանի բնակավայրերում իրականացրել է հիմնական կարիքների ուսումնասիրություն: Դրա արդյունքում ծրագրում ընդգրկվել են շուրջ 335 համայնքներ, որոնք ներկայացված են ծրագրի 5-րդ կետում: Մնացած շահառուների ընտրությունը կատարվելու է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, ծրագրի

		մոնիտորների և համայնքային ակտիվ խմբերի միջոցով՝ կազմակերպությունում մշակված ընտանիքների կարիքների գնահատման հարցաթերթիկի հիման վրա: Սոցիալապես անապահով քաղաքացիներին բարեգործական օգնություն է տրվելու նաև համայնքների ղեկավարների, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Բացի այդ, անհրաժեշտության դեպքում ապրանքներ են բաժանվելու նաև ծրագրում չընդգրկված այլ համայնքների կարիքավոր ընտանիքներին, երեխաներին, կրթական ու առողջապահական հաստատություններին, կազմակերպության հետ համագործակցող հասարակական կազմակերպու-թյուններին: Բեռի յուրաքանչյուր խմբաքանակի ներմուծման ժամանակ առանձին հայտ է ներկայացվում ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնին՝ բարեգործության ոլորտը համակարգող ՀՀ փոխվարչապետին, որին կցվում են ստացվող բեռի պարունակության և բաշխման ցանկի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թ. հունվարի 1-ից մինչև 2024 թ. դեկտեմբերի 31-ը:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2022 – 2024 թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 9,100,000 ԱՄՆ դոլարին համարժեք 4,331,600,000 ՀՀ դրամ արժողությամբ բարեգործական օգնության բաշխում, որի չափերն ըստ համայնքների պլանավորվել է շահառուների քանակին համապատասխան: Բաշխումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների ու համայնքային նախաձեռնող խմբերի օգնությամբ և համայնքների անդամների մասնակցությամբ՝ հիմնականում կատարվելու է Նոր տարվա ու Սուրբ ծննդի, զատիկի տոների կապակցությամբ, ամառային ճամբարի ժամանակ, երեխաների պաշտպանության օրը, ուսումնական տարվա սկզբին ինչպես նաև ըստ ծագած անհրաժեշտության:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու	Մարդասիրական բեռների ընդհանուր արժեքը կազմում է մոտավորապես 9,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք 4,284,000,000 ՀՀ դրամ, որից հագուստ՝ 2,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք 1,190,000,000 ՀՀ դրամ, կոշիկ 2,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք 952,000,000 ՀՀ դրամ, դպրոցական պարագաներ

	ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	և խաղալիքներ՝ 900,000 ԱՄՆ դոլարին համարժեք 428,400,000 ՀՀ դրամ, շինանյութ՝ 1,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, կահույք և կենցաղային պարագաներ՝ 1,500,000 ԱՄՆ դոլարին համարժեք 714,000,000 ՀՀ դրամ, մարզական պարագաներ՝ 300,000 ԱՄՆ դոլարին համարժեք 142,800,000 ՀՀ դրամ, հիգիենիկ պարագաներ՝ 300,000 ԱՄՆ դոլարին համարժեք 142,800,000 ՀՀ դրամ: Տրանսպորտային ծախսերը Հայաստանի տարածքում նախատեսվում է, որ չեն գերազանցի 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք 47,600,000ՀՀ դրամը: Բեռների տեղափոխումն իրականացնելու նպատակով ՀՀ տարածքում տրանսպորտային ծառայություն մատուցող որևէ կազմակերպության կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ հետ կնքվելու է ծառայությունների մատուցման պայմանագիր: Ապրանքները շահառուներին բաժանվելու են «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից՝ համայնքային ակտիվ (նախաձեռնող) խմբերի և համայնքի ղեկավարների միջոցով կամ համատեղ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպության ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ներառում են Հայաստանի տարածքում տրանսպորտային ծախսեր, որը կկազմի 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք 47,600,000 ՀՀ դրամ
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագիրը իրականացնելու ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է տարածաշրջանում գտնվող պետական և տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմինների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից: Հումանիտար օգնություն ստացած շահառուների վերջնական ցուցակները տրամադրվելու են միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին և այլ շահագրգիռ մարմիններին:

		Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ